

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ,
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ Ո Ւ Ր Գ Ե Ն Ս Ե Վ Ա Կ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Հ Գ Ա Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ն Ր Ե Վ Ա Ն 1 9 7 4



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ВЫДАЮЩИЕСЯ УЧЕНЫЕ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

№ 18

ГУРГЕН СЕВАК

Вступительная статья Г. О. КОСТАНИЯ
Библиография составлена Р. А. БАБАДЖАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԵՆՈՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

№ 18

Գ Ո Ւ Ր Գ Ե Ն Ս Ե Վ Ա Կ

Ներածականը Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻ
Մատենագիտությունը կազմել է Ռ. Ա. ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1974

A
I
13455

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Հ. ՄԵՔԵՐՅԱՆ
Ответственный редактор А. А. МЕКЕРЯН





ԱՎԱԳԵՄԻԿՈՍ ԳՈՐԳԵՆ ՍԵՎԱԿԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

- 1904 թ. ապրիլի 15-ին (հին տոմարով) Թիֆլիսում ծնվել է Գուրգեն Գրիգորի Սևակը (Գրիգորյան):
- 1924 թ. Ավարտել է նախկին Ներսիսյան դպրոցը:
- 1928 թ. Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմա-գրական բաժինը:
- 1931 թ. առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանում (դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, 1941—1971 թթ.՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ):
- 1932 թ. Ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան:
- 1932—1938 թթ. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի լեզվի սեկցիայի ղեկավար:
- 1932—1940 թթ. Պետական տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղար:
- 1932 թ. մինչև օրս՝ էսպերանտո լեզվի համաշխարհային ահագեմիայի անդամ:
- 1937 թ. մինչև օրս՝ Երևանի պետական համալսարանի Շոթա Ռուսթամյան լուսնական հայ-վրացական բանասիրության կաբինետի ղեկավար:
- 1937 թ. Շնորհվել է դոցենտի կոչում:
- 1940 թ. Շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
- 1941—1946 թթ. Գասախոսել է Բարվի հեռակա մանկավարժական ինստիտուտի և Թբիլիսիի պետական համալսարանի հեռակա հայկական բաժիններում:

- 1946 թ. Պարզեատրվել է «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիտության համար» մեդալով:
- 1946, 1964, 1970 թթ. Պարզեատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրերով:
- 1947 թ. մինչև օրս աշխատում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտում սկզբում որպես արդի հայերենի, այնուհետև՝ կիրառական լեզվաբանության, ներկայումս՝ գրական լեզվի նորմաների և տերմինների բաժնի վարիչ:
- 1948 թ. Ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում:
- 1956 թ. Ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակիցանդամ:
- 1961 թ. Շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:
- 1967 թ. Շնորհվել է Վրացական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:
- 1969 թ. առ այսօր՝ Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր գիտատերմինաբանության խորհրդի նախագահ:
- 1970 թ. Պարզեատրվել է «Ի նշանավորումն Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի. 1870—1970» մեդալով:
- 1971 թ. Ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱ.-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գուրգեն Գրիգորի Սևակը սովետական շրջանում աճած և իր գիտական գործունեությամբ առավել աչքի ընկած հայ լեզվաբաններից է: Նա մեծ, անգնահատելի վաստակ ունի ոչ միայն ժամանակակից հայոց լեզվի գիտական ուսումնասիրության, այլև տեսական-լեզվաբանական մտքի զարգացման ասպարեզում: Գ. Սևակը առաջին մարքսիստ լեզվաբաններից մեկն է Հայաստանում: 1932 թ. մինչև այժմ նա պատմական մատերիալիզմի և դիալեկտիկայի հիմունքները ստեղծագործաբար ներդնում է լեզվաբանության մեջ և նշանակալից դեր կատարում հայերենագիտության մեջ:

Գ. Սևակը (Գրիգորյան) ծնվել է 1904 թ. Թբիլիսի քաղաքում, բանվորի ընտանիքում: Տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է նույն տեղում: 1924 թ. ավարտելով նախկին Ներսիսյան դպրոցը, տեղափոխվել է Երևան և ընդունվել պետական համալսարանի պատմա-գրական բաժինը: Համալսարանն ավարտելուց հետո, 1929 թ., ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո լրիվ ծանրաբեռնը-

վածություններ անցել է մանկավարժական-դասախոսական աշխատանքի և 45 տարի անընդմեջ աշխատում է համալսարանում որպես դասախոս, դոցենտ, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ վայելելով ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի համակրանքն ու սերը: Այդ տարիների ընթացքում նա հրատարակել է երկու բուհական դասագիրք («Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» և «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»), ինչպես նաև մի շարք արժեքավոր աշխատություններ: Նրա գրչին են պատկանում շուրջ յոթ տասնյակ տպագիր մենագրական արժեքավոր ուսումնասիրություններ, դպրոցական և բուհական դասագրքեր ու գիտական հոդվածներ:

1940 թ. Սևակը դիսերտացիայի պաշտպանությունից մեծապես է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1941 թ. մինչև 1971 թ., 30 տարի անընդմեջ, վարել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնը: 1932 թ. մինչև 1938 թ. եղել է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի լեզվաբանության սեկցիայի ղեկավար: Երկար տարիներ ղեկավարել է նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի սեկտորը: 1948 թ. պաշտպանել է երկրորդ դիսերտացիան և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում: 1956 թ. բնարվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1971 թ.՝ ակադեմիկոս: 1961 թ.

ՀՍՍՀ կառավարությունը նրան շնորհել է գիտություն վաստակավոր գործչի կոչում:

Պրոֆ. Գ. Սևակը մեծ ու կարևոր դեր է խաղացել հայոց լեզվի պետական նորմավորման ասպարեզում: Նրա ջանքերով է ստեղծվել պետական տերմինաբանական կոմիտեն և նրա կողմից ներկայացված նախագծերով են հաստատվել հայոց լեզվի ուղղագրության, ուղղախոսության, կետադրության, տերմինաբանության ու տառադարձության պետական նորմաները, որոնք անշուշտ խոշոր ներդրում են լեզվաշինարարության բնագավառում: Պրոֆ. Սևակը վաղուց ի վեր համամիութենական ճանաչում է ստացել ոչ միայն որպես ժամանակակից հայերենի խոշորագույն մասնագետ, այլև որպես լեզվաբանության տեսական-փիլիսոփայական հարցերի հմուտ մեկնաբան:

Իր գործունեության առաջին տարիներից մինչև այսօր նա միշտ ներգրավված է եղել ակտիվ հասարակական աշխատանքների: 1937 թ. մինչև այժմ պրոֆ. Գ. Սևակը եղել է միշտ գիտական խորհուրդների և հանձնաժողովների անդամ, ղեկավարում է Երևանի համալսարանի Շ. Ռուսթավելու անվան հայ-վրացական բանասիրության կաբինետը, 1932 թ. էսպերանտո լեզվի համաշխարհային ակադեմիայի անդամ է: Գ. Սևակն աճեցրել և ղեկավարել է հինգ տասնյակից ավելի ասպիրանտներ ու զիսերտանտներ, որոնց մեջ կան գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ, դոկտոր-պրոֆեսորներ և 40-ից ավելի դոցենտ-թեկնածուներ: Արտասահմանի համար պատրաստել է հայագիտական կադրեր (Հուն-

գարիայի՝ Սալմաշի Պալ, Չեխոսլովակիայի՝ Լյուդմիլա Մո-
տալովա, Լեհաստանի՝ Անգրեյ Պիսովիչ և ուրիշներ)։

Պրոֆ. Սևակի գիտական գործունեությունը հիմնականում
ծավալվել է երեք ուղղություններ՝ գիտա-հետազոտական, գի-
տա-մանկավարժական և գիտա-կազմակերպչական։ Նրա աշ-
խատությունները, որոնց մեծ մասը բարձրագույն դպրոցների
բանասիրական ֆակուլտետների ուսանողների, հայոց լեզվի
դասատուների և ընդհանրապես հայ լեզվաբանությունը ըզ-
բաղվողների սեղանի դրքերից են, հսկայական դեր են կատա-
րել սովետական շրջանի հայ լեզվաբանության զարգացման,
ինչպես նաև բարձրորակ մասնագետների պատրաստման գոր-
ծում։ Սևակի աշխատություններում դրսևորվում է հեղինակի
գիտական ընդհանրացումներ կատարող խորաթափանց միտ-
քը, լեզվաբանական և հայագիտական լայն պատրաստու-
թյունը։

Գ. Սևակի հրատարակած աշխատություններից առանձ-
նապես աչքի են ընկնում հետևյալ ուսումնասիրությունները.

1. «Լենինը և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի
մեջ». այստեղ հեղինակը մարքսիզմ-լենինիզմի դիրքերից բա-
ցահայտում է լեզվի դիալեկտիկական օրինաչափությունները,
խորաթափանց հմտություններ վեր է լուծում լեզվական առանձ-
նահատկությունները դիալեկտիկական մատերիալիզմի հի-
մունքներով և մարքսիզմը ընդերում է լեզվաբանության մեջ։
Աշխատությունը արժեքավոր է դառնում նաև նրանով, որ ա-
ռաջին անգամ լեզվական-տեսական մի շարք հարցերի տրր-
վում է նոր, մարքսիստական մեկնաբանություն։

2. «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատության մեջ քննու-

Սյան է առնված խոսքի մասերի տեսությունը: Հեղինակը ներկայացնում է խոսքի մասերի վերաբերյալ սովետական լեզվաբանություն մեջ գոյություն ունեցող ուսմունքները և մշակում մարքսիստական իմացաբանության դրույթներն ու ըսկրզբունքները, որոնցով, նրա կարծիքով, պետք է ընթանա իմացաբանական քերականությունը:

3. «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (գիրք Ա., 1939 թ., գիրք Բ., 1947 թ.):

Գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ հայոց լեզվի տեսությունը պետք է կազմված լինի երեք գրքից: Առաջին գիրքն ընդգրկում է հետևյալ բաժինները. նախաշավիղ, ժամանակակից հայոց լեզվի կազմավորումը, հնչյունաբանություն և ձևաբանություն: Երկրորդ գրքի առաջին պրակը նվիրված է բառագիտությանը և բաղկացած է երկու գլխից. ա) հայոց լեզվի բառագանձը և բ) բառակազմություն: Երրորդ գիրքը, ուր հեղինակը պետք է զետեղեր շարահյուսությունը, ոճաբանությունը և կետագրությունը, դժբախտաբար լույս չտեսավ:

4. «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատությունը փաստորեն արևելահայ գրական աշխարհաբարի պատմության պարբերացման և ղանաղան հարցերին նվիրված ուսումնասիրություն է, որի զգալի մասը հեղինակը նախապես հրատարակել է առանձին հոդվածներով:

5. «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատությունը հայոց գրական լեզվի խոր և լուրջ ուսումնասիրություն է, որին հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ էջերում:

6. «Հայոց լեզվի շարահյուսություն»-ը իբրև դասագիրք

սկզբնական շրջանում նախատեսված էր միջնակարգ դպրոցի 6—8-րդ, իսկ վերջին տարիներին՝ 7—8-րդ դասարանների համար: Հայ դպրոցի պատմության մեջ ոչ մի դպրոցական դասագիրք այնքան հրատարակություն չի ունեցել, որքան պրոֆ. Գ. Սևակի կազմած շարահյուսության դասագիրքը: Հոբելյանական 30-րդ հրատարակությունը տեղի ունեցավ 1973 թ.: Դասագրքով մի քանի սերունդներ են կրթվել և դաստիարակվել:

Գ. Սևակի մեծածավալ հոդվածներից ու գրքույկներից առավել աչքի են ընկնում «Հաբեբաբանությունը և մարխսիզմը» (1930 թ.), «Լենինը և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ» (1935 թ.), «Թե ի՞նչ է արել Մաշտոցը Սամոսատում» (1947 թ.), «Լենինյան պարտիականության սկզբունքը և լեզվաբանությունը» (1949 թ.), «Շարահյուսության մի ֆանի հարցեր մարխս-լենինյան իմացաբանության լույսի տակ» (1945 թ.), Մեսրոպյան գրերը, նրանց կառուցվածքի սկզբունքները և աղբյուրները» (1963 թ.), «Ն. Զարյանի «Ա.րա Գեղեցիկ ողբերգությունը» (բանասիրական էսյուե, 1954 թ.), «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» (1959 թ.), «Սերունդների կոնվերբեականության բնագավառում» (1934 թ.), «Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը» (1946 թ.) և այլն:

Գ. Սևակի աշխատությունների թվարկումից հայտնի է դառնում, որ նա հիմնականում զբաղվել է ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրությամբ, բանասիրական, ոճական, ինչպես նաև լեզվի տեսական ու փիլիսոփայական հարցերով:

Լեզվի տեսության հարցերում 1932 թ., երբ պաշտոնապես միայն Ն. Մառի լեզվի նոր ուսմունքն էր ընդունված, պրոֆ. Սևակը պայքար ծավալելով երկու ճակատում՝ հնդեվրոպաբանության և հաբեթաբանության դեմ, ձգտել է լեզվական հարցերին տալ մարքսիստական լուսաբանություն: Հընդեվրոպաբանության վերաբերյալ նա այն միտքն է հայտնել, որ «Իր հետազոտությունների նյութը դարձնելով անտմականորեն առաջ եկած և կատարելագործված գրական լեզուներ և նրանց կառչած մնալով՝ հնդեվրոպական լեզվաբանությունն իր իդեալիստական, ձևական-տրամաբանական մեթոդով այնպես էլ չկարողացավ դառնալ իսկական գիտություն»¹: Ավելին՝ հեղինակը գտնում է, որ հնդեվրոպական լեզվաբանությունը ծայրահեղության է հասցվել որոշ բուրժուական ուսուցիչներին գիտնականների կողմից և հիմք հանդիսացել ուսուցական տեսության:

Սևակը քննադատել է նաև ակադ. Ն. Մառի այսպես կոչված «Լեզվի նոր ուսմունքը» կամ հաբեթաբանությունը, ընդունելով, որ Մառը յուր ուսմունքով թեև ձգտում էր հիմնադրել մարքսիստական լեզվաբանությունը, սակայն չկարողացավ լուծել առաջադրված խնդիրը և թույլ տվեց մի շարք լուրջ սխալներ: Այս սխալների մասին նա խոսում է «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» հոդվածում: Այստեղ նշվում է, որ Մառը դեռևս չի ստեղծել մատերիալիստական լեզվաբանություն, Մառի մոտ տեսականը խզված է գործնականից: Մառն իր լեզվի ուսմունքի մեջ անտեսում է առանձին

¹ Հաբեթաբանությունը և մարքսիզմը, էջ 185:

լեզուների տարբերությունները և յուրաքանչյուր լեզվի մեջ որոնում է նախապատմականը:

«Առաջին հիմնական բացը,—նշում է Գ. Սևակը,—որ մենք տեսնում ենք սկազ. Մառի նույնիսկ ամենավերջին աշխատությունների մեջ՝ տեսություն և գործնականի խզումն է, եթերային տրամաբան կառուցումների հետևից ընկնելն ու լեզվական շինարարության այսօրվա անհետաձգելի խնդիրների թերագնահատումը»: Այնուհետև հեղինակը նշում է, որ Մառը թեև վերջին տարիների ընթացքում հրապարակել է մի շարք աշխատություններ, որոնց թեման կարծես թե գործնական բովանդակություն պիտի ընդգրկեր, բայց մոտիկից ծանոթանալով այդ աշխատություններին, ինչպես օրինակ, «Մայրենի լեզուն՝ կուլտուրական վերելքի հուժկու լծակ», «Հարեթական տեսության լեզվական քաղաքականությունը», «Լեզու և դիր», «Լեզու և մտածողություն» և այլն,—մենք տեսնում ենք, որ նրանց բնույթը վերացական է և ձևականորեն են շոշափվում այժմեական հարցերը: «Ի՞նչ ենք տեսնում սկազ. Մառի մոտ,—հարց է տալիս Գ. Սևակը և պատասխանում,—նույն վերացականությունը, նույն կտրվածությունն այսօրից և թուխքը դեպի հեռավոր ապագան, լեզվապան կատեգորիաների վերացական հուլովում, այսօրվա թերագնահատում»: Միանգամայն ճիշտ դիրքերից քննադատելով Մառի լեզվական ուսմունքի վերացական լինելը, Սևակը եզրակացնում է, որ «Մեծ արժանիքներ ունեցող սկազ. Մառին մնում է միայն մի ելք՝ օր առաջ յուրացնել մարքսիզմ-լենինիզմը, հրաժարվել մաոիզմից և կանգնել դադափարա-

խոսական ճակատի լենինյան դիրքերում»։ Ինչպես տեսնում ենք 42 տարի առաջ՝ 1932 թ., Մառի լեզվի ուսմունքի վերջնական ձևավորման և տիրապետության տարիներին, երբ փաստորեն միայն Մառի ուսմունքն էր ընդունվում և փառաբանվում, — այսպիսի համարձակ և միանգամայն ճիշտ, մարքսիստական դիրքերից Մառի ուսմունքի առաջին սուր քննադատը հայ իրականության մեջ եղել է Գ. Սևակը։

Նույն հոդվածում Գ. Սևակը սուր քննադատության է ենթարկել և ժխտել Ն. Մառի նաև քառատարր վերլուծության մեթոդը. «Ակազ. Մառը չի տեսնում կոնկրետ լեզուների տարբերությունները, օրինաչափությունները. այսօրվա բոլոր լեզուների մեջ նա որոնում է միայն հինը, նախապատմականը, այն շարաբաստիկ շորս էլեմենտ բառերը (սալ, բեր, յոն, ուշ), որոնցից ըստ Մառի առաջացել են աշխարհի բոլոր լեզուները... Այդ շորս էլեմենտներին է հանգեցնում Մառն աշխարհի բոլոր լեզուների սամբոզ բառապաշարը՝ կանգ շոունելով բռնազբոսիկ ստուգաբանությունների առաջ և մեկը՝ բարձրագույն որակը մեխանիստորեն նույնացնելով ցածր որակին»։

Գ. Սևակի «Պայքար երկու ֆրոնտում լեզվաբանության մեջ» հոդվածից տեղեկանում ենք, որ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի լեզվաբանության ենթասեկցիան, 1932 թ. հունիսի 12-ի և 18-ի նիստերում, քննել է Սևակի զեկուցումը, որտեղ հեղինակը հնդեվրոպական լեզվաբանությունը բնորոշել է որպես հիմնականում իդեալիստական և սուբյեկտիվիստական ուղղություն, իսկ Մառի լեզվի ուսմունքը՝ գերազան-

ցապես մեխանիստական ուսմունք, դիալեկտիկայի որոշ տարրերով: Խճարկե իրավացի չէր Գ. Սևակը, երբ գտնում էր, որ «հնդեվրոպաբանությունը իր տեսական ու գործնական եզրահանգումներով, «նախալեզուների», «ազնիվ» և «ոչ ազնիվ» լեզուների, ռասայականության ու այլ դրույթներով ծանուցել է և ծանայում է կապիտալիզմին, հանդիսանում է նրա դասակարգային գիտությունը»: Այստեղ, անշուշտ նկատում ենք ժամանակի գոեհիկ մատերիալիստական ուղղության դրոշմը: Սակայն իրավացի էր Սևակը, երբ պահանջում էր, որ մարքսիստ լեզվաբանները պետք է ուշադրության կենտրոնը դարձնեն Մառի նոր ուսմունքի՝ հաբեթաբանության դեմ մղվող պայքարը և կրակը կենտրոնացնեն հենց այդ ճակատամասում, քանի որ հիմնականում հակադիալեկտիկական, մեխանիստական կառուցում ունեցող հաբեթականությունը վերջին տարիներին մարքսիստական լեզվաբանության համբավ էր վայելում: Ավելին՝ Սևակը ուղղակի գտնում էր, որ «Իր մեխանիստական դրույթներով, պատմազանցությամբ, բանազբոսիկ եզրակացություններով, բուրժուական լեզվաբանության նվաճումների բացարձակ բացասմամբ և մարքսիստական ֆրազեոլոգիայով՝ հաբեթաբանությունը լեզվաբանության մեջ այսօր դառնում է զխավոր վտանգ, քանի որ խոչընդոտում է իսկական մարքս-լենինյան լեզվաբանության կառուցման»:

Այստեղ տեղին է ասել. ափսոս, որ Գ. Սևակը մինչև վերջ հետևողական շմնաց իր տեսակետին հաբեթաբանություն կամ Ն. Մառի լեզվի նոր ուսմունքի վերաբերյալ և հե-

տաղաչում հարկադրված եղավ անցնել մառականների բա-
նակը և տուրք տալ մառականությունը:

Այդ տարիներին Գ. Սևակը լեզուն քննություն ենթարկե-
լով մարքսիստական դիրքերից, լեզվի մասին տալիս է իր հե-
տևյալ բնորոշումը. «Լեզվի ծավալուն հասկացությունը մեր
կարծիքով, պետք է կազմի հրեք տարբեր, դիալեկտիկորեն
իրար կապված, իրարից բխող մոմենտներից, որոնք լեզվի
հասարակական հրեք տարբեր ֆունկցիաներն են բացահայ-
տում. ա) Լեզուն հաղորդակցման առաջնային և կարևորա-
գույն միջոցն է, այսինքն մարդիկ իրար հետ խոսում, իրար
հետ հաղորդակցվում են լեզվի միջոցով, և լեզուն էլ հենց ա-
ռաջ է եկել «իրար մի բան ասելու կարիքից» (էնգելս): բ) Լե-
զուն հանդիսանում է տարբերակված, կազմակերպված մտա-
ծողության միջոցը, մարդիկ ոչ միայն խոսում, հաղորդակ-
ցվում են լեզվի միջոցով, այլ մտածում են դարձյալ լեզվի մի-
ջոցով: գ) Լեզուն հանդիսանում է գործնական և առարկայա-
կան գիտակցություն²: Ընդհանրապես լեզվի բնորոշման հետ
Սևակը կապում է ազգային լեզվի բնորոշումը: Նա քննադա-
տելով երիտասարդականների՝ անհատական լեզուների գոյու-
թյունը, այն տեսակետն է պաշտպանում, որ յուրաքանչյուր
անհատական լեզու ընդհանուրի մասնավոր դրսևորումն է
հանդիսանում:

Լեզուն քննելով պատմական պրոցեսի ոլորտում, պրոֆ.

2 «Ընդհանուր և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ»,
«Խոսքի մասերի ուսմունքը»:



Սեակը նշում է երկու հիմնական գործոն. ա) լեզուն իր գոյության ընթացքում պահպանվում է ավանդության շնորհիվ, այսինքն՝ հասարակության յուրաքանչյուր անդամ ժառանգում է ավյալ հանրության լեզվական համակարգը: Լեզուն բերանից-բերան հաղորդվելով և սերնդից-սերունդ անցնելով՝ պարտադիր է դառնում յուրաքանչյուր անդամի համար. բ) հասարակության յուրաքանչյուր անդամ լեզվի այդ ավանդականությունն ընդունելով հանդերձ՝ ակտիվ կերպով ներգործում է լեզվի վրա, որի հետևանքով էլ առաջանում է լեզվի փոփոխությունը, խախտում է ավանդականությունը: Այս երևույթը լեզվի մեջ հեղինակը կոչում է ավանդախախտություն: Ավանդականությունը և ավանդախախտությունը, հեղինակի բառերով ասած, «Գործում են յուրաքանչյուր լեզվի մեջ և առաջ տանում նրա զարգացումը: Ավանդությունը հրամայում է գործածել այսինչ ձևը, այսինչ բառը, այսինչ ոճը, և յուրաքանչյուր քաղաքացի ընդունում է այն, ինչ որ թելադրում է նրան ավանդությունը... Ավանդության թելադրած ընդհանուր ազգային լեզուն բեկվում, կոնկրետանում, անհատականանում է առանձին անհատների մոտ»³: Այնուհետև հեղինակը գտնում է, որ ավանդության ընդունումով տեղի է ունենում ավանդախախտում: Ավանդախախտությունը վերաբերում է լեզվի թե բովանդակությանը և թե ձևին: Եթե բովանդակության բնագավառում տեղի ունեցող ավանդախախտումը պայմանավորված է անհատի հասարակական գոյով,

3 «Հայոց լեզվի համառոտ պատմություն»:

ասլա ձևի բնագավառում տեղի ունեցող ավանդախախտումը սլայմանավորված է այն ավանդույթյամբ, որ ժառանգել է սլվյալ անհատը: Իսկ ինչ վերաբերում է քերականությունը, ասլա պրոֆ. Սևակը գտնում է, որ քերականությունը թեև որոշ ակտիվ դեր ունի լեզվի կարգավորման պրոցեսում, «բայց նրա այդ ակտիվությունը սահմանափակված է գործող ավանդույթյամբ»⁴:

Լեզվի տեսության բնագավառի մյուս հարցը, որին անդրադարձել է Գ. Սևակը, լեզուների ծագման և ցեղակցության հարցն է: Այս հարցում նա այն տեսակետն է պաշտպանում, որ ցեղակից լեզուների միջև անխուսափելի են լեզվական ազդակցական ընդհանրությունները: Հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման հարցին անդրադառնալով, Սևակը նշում է, որ հայ ժողովուրդը (իմա՝ հասարակությունը) և նրա լեզուն ծագել են ոչ թե մեր դարաշրջանից առաջ 7—2-րդ դդ., այլ մոտավորապես 2000 տարի մեր թվականությունից առաջ: Անջատվելով հնդեվրոպական տոհմերից, հայ տոհմերը 2000—1500 թթ. մեր թվականությունից առաջ գտնվում էին Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում: Հետագայում տարբեր ժամանակներում և տարբեր ալիքներով տարածվելով դեպի արևելք, հաստատվում են Փոքր Ասիայում, Այրարատում, Ծոփաց աշխարհում և Հարբում: Գտնվելով տերիտորիալ անջատվածության և էթնիկական ու լեզվական տարբեր միջավայրերում, ճյուղավորված երբեմնի հայերենը (նախահայերեն

⁴ «Հայոց լեզվի համառոտ պատմություն», էջ 36:

րենը) զարգացվում է տարբեր ուղիներով, որից և առաջ են գալիս նրա բարբառային հիմնական տարբերությունները:

7—2-րդ դդ. մեր թվականությունից առաջ կազմավորվում է հայ էթնոսը և հարավային Հայաստանի (Հարբի) բարբառի հիման վրա ստեղծվում է ընդհանուր էթնիկական լեզուն: Սակայն պրոֆ. Սևակը գտնում է, որ էթնիկական լեզվի ստեղծումը շհանգեցրեց բարբառների ձուլմանը նրա մեջ, որովհետև հետագա անջատ կյանքը, ֆեոդալական մասնատվածությունը, պետականության անկումը և այլ հանգամանքներ ու պայմաններ հանգեցրին բարբառների ինտենսիվ զարգացմանը, նրա հետագա նորանոր ձյուզավորումներին:

Պրոֆ. Ա. Սևակի կարծիքով զրաբարը ոչ թե բոլոր բարբառների մայրն է, այլ բարբառներից մեկի մշակված արտահայտությունը, հայ էթնոսի համաժողովրդական լեզուն, սրը որպես կուլտուրայի ձև և զրավոր ընդհանուր լեզու բոլոր հայերի համար հետագայում ևս պահպանեց իր գոյությունը և մահացավ մեր թվականության 5-րդ դարից սկսած: Սևակը գտնում է, որ մի շարք հանգամանքների հետևանքով զրաբարն ավելի մոտ մնաց նախասկզբնական տոհմա-ցեղային հայոց լեզվին (նախահայերենին), քան մյուս բոլոր հայ բարբառները: Դրա շնորհիվ էլ նա ներկայացնում է մեր լեզվի ավելի հին վիճակը, քան բարբառներից որևէ մեկը կամ բոլոր բարբառները միասին վերցրած⁵:

⁵ «Հայոց լեզվի ծագման և ցեղակցության հարցի շուրջը», «Սովետական ուսանողություն», 1953, 20 հունիսի:

Հարկ է նշել, որ դեռևս վիճելի են գրաբարի ու բարբառների առաջացման, գրաբարի մահացման, գրաբարի ու բարբառների փոխհարաբերության ու այլ հարցեր: Այդ հարցերը հայագիտության բարդ, կնճռոտ և մի շարք կողմերով դեռևս վերջնականապես չլուծված հարցեր են, որոնք պահանջում են հայագետների համատեղ, մանրակրկիտ հետազոտական աշխատանքը:

Պրոֆ. Գ. Սևակի՝ այս ուղղությամբ առաջ քաշած հարցերը ինքնին խիստ հետաքրքրական են, խոր մտածելու տեղիք են տալիս և հայագետներին հրահրում՝ հանգամանորեն ըզբաղվելու այդ հարցերով: Անշուշտ հեղինակի առաջ քաշած հարցերի մեջ կան վիճելի, հիմնավորում պահանջող հարցեր: Պարզ է, որ հայագիտությունը չի կարող զարգանալ, առաջադիմել առանց կարծիքների պայքարի, առանց տեսակետների բախման, առանց քննադատության լայն ծավալման:

Պրոֆ. Գ. Սևակը սկզբնապես պնդել է, որ «Գրաբարը ոչ 5-րդ դարում, ոչ նրանից առաջ և ոչ էլ նրանից հետո չի եղել ամբողջ հայ ժողովրդի խոսակցական լեզուն», իսկ բարբառները, ըստ հեղինակի կարծիքի, «նախապես ինքնուրույն ցեղերի լեզուներ են եղել»: Այսպիսով, եթե գրաբարի և բարբառների առաջացման հարցում Սևակը տուրք է տվել մահականությանը, ապա ինքնուրույն և ընդունելի մոտեցում է ցուցաբերել ժամանակակից հայերենի կազմավորման հարցում, գտնելով, որ այն ընթացել է գրաբարի և բարբառների հարատև ազդեցության ներքո: Արդի հայերենը իբրև լեզվական նոր որակ, իր մեջ պարունակելով գրաբարի և բարբառ-

ների տարրերը ոչ գրաբարի աղավաղումն է, ոչ էլ բարբառի մշակումը, այլ «գրաբարի ու բարբառների պատվանդանի վերա կանգնած մի համագրական լեզու»:

Գ. Սևակի գործունեության առաջին շրջանի ամենագրական և առաջադիմական կողմը այն պետք է համարել, որ նա քերականության մեջ, մարքսիզմի դիրքերից, անողոք ու անհաշտ պայքար ծավալեց ֆորմալիզմի դեմ և լեզվի տեսության հարցերում ամենավճռական, ջախջախիչ հարվածը հասցրեց նրան իր «Սերունդների կռիվը քերականության բնագավառում» հայտնի հոդվածով: Այս նշանավոր հոդվածում Սևակը հանգամանորեն քննադատում է Ն. Ալլահվերդյանի, Հ. Պետրոսյանի և նրանց համախոհների ֆորմալիստական հայացքները քերականության մեջ, որոնք ձգտում էին, հեղինակի բաներով ասած, «նոր գործի թերությունների տակ (խոսքը վերաբերում է Ա. Ղարիբյանի 1932 թ. լույս տեսած քերականության դասագրքին—Հ. Կ.) քողարկել առողջն ու առաջադիմականը և առաջ քաշել պրոլետարական հեղափոխության ակտիվ մահվան դատապարտված հին աշխարհի մի կտորը, տվյալ դեպքում հին աշխարհայացքի մի արտահայտությունը՝ ֆորմալիստական և մետաֆիզիկական քերականությունը, որի երգվյալ հավատարմատարներն են նրանք»⁶:

Գ. Սևակը հոդվածում իրավացիորեն դատում է, որ ֆորմալիստները բոլոր խոսքի մասերը խառնել են իրար և ստեղծել մի քառս, որից հավանաբար իրենք էլ դժվարություններ են

6 Տե՛ս «Սերունդների կռիվը քերականության բնագավառում» հոդվածը:

բան հասկանում: Այսպես, մինչդեռ դարերի ընթացքում ածականը, թվականը և դերանունը աստիճանաբար սահմանադրվել են անունից (գոյականից), ֆորմալիստներն այդ խոսքի մասերը խառնել են իրար և վերցրել թվականը, որպես խոսքի մաս, ածականը, որպես խոսքի մաս, դերանունը որպես խոսքի մաս: Վկայակոչելով պրոֆ. Մ. Աբեղյանին, Սևակը նշում է, որ ըստ պրոֆ. Աբեղյանի գոյակաները լինում են 1) անուն գոյական կամ գոյական անուն (տուն, փայտ, լավություն), 2) թվական գոյական կամ գոյական թվական (տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ), 3) դերբայ գոյական կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել), 4) դերանուն գոյական կամ գոյական դերանուն (ես, դու, նա), ածականները լինում են՝ 1) անուն ածական կամ ածական անուն (լավ, վատ, սև), 2) թվական ածական կամ ածական թվական (մի, երկու, երեք), 3) դերբայ ածական կամ ածական դերբայ, կամ բայածական (գրած, գրելու, գրող), 4) դերանուն ածական կամ ածական դերանուն (այս, այդ այն) (պրոֆ. Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսութուն», էջ 131—132):

Այս ըմբռնումով ֆորմալիստները գնալ, ասել, գրել—համարել են գոյականի մի տեսակ և ոչ բայ, որովհետև ֆորմալիստները բայն իբրև խոսքի մաս նույնացնում են ստորոգյալի հետ, իսկ գնալ, գրել, ասել ստորոգյալի ձևերը շեն: Նույն հասկացությամբ՝ ես, դու, նա դերանունները դիտվել են իբրև գոյական, իմ, քո, նրա, այս, այդ, այն, գրած, գրելու, գրող—դերանունները և դերբայները՝ իբրև ածական: Այսպիսի անողորմիտանգամայն տեղին քննադատությամբ պրոֆ. Գ. Սևակը դեռ-

ևս 1934 թ. առաջին վճռական հարվածը հասցրեց ֆորմալիզմին հայ բերականությունից բնագավառում և հետագայում հիմնավորեց իր նոր առաջ քաշած բերականական դրույթները:

Պրոֆ. Սևակի գործունեությունից առաջին շրջանն ավարտվում է «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» մենագրական ուսումնասիրության հրատարակմամբ (1948 թ.), որն անկասկած կարևոր ներդրում էր հայ գրական լեզվի պատմության ուսումնասիրության գործում: Այստեղ հեղինակը արևելահայ գրական լեզվի պատմության համար տալիս է, հեղինակի բառերով ասած, հետևյալ պարբերացումը.

ա) Կազմավորման կամ վաղ աշխարհաբարի շրջան (17—18-րդ դդ.):

բ) Ձևավորման կամ լուսավորական շրջան (19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականներ):

գ) Ժողովրդականացման կամ դասական աշխարհաբարի շրջան (19-րդ դարի 70-ական թվականներից մինչև 1920 թ.) և վերջապես.

դ) Սովետական կամ համազգային լեզվի շրջան:

Քննվող հարցերի վերաբերյալ Սևակն, ընդհանուր առմամբ, արտահայտել է ընդունելի տեսակետներ, որոշ տուրք տալով, սակայն, այն ժամանակվա տիրապետող լեզվական ուսմունքին՝ մառականությունը:

Գ. Սևակի գիտական գործունեությունից երկրորդ շրջանն սկսվում է լեզվաբանական դիսկուսիայից հետո, 1955 թ. լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» գրքով, ուր հեղինակը ամփոփել է իր նախորդ շրջանի ուսումնասիրու-

Սյունները, համալրել նոր բաժիններով, վերանայել իր տեսական-լեզվաբանական դրույթները և միաժամանակ առաջադրել նոր, ընդունելի տեսակետներ: Սակայն ճշմարտության դեմ շմեղանշելու համար, ասենք, նաև, որ այստեղ էլ հեղինակը իրավացիորեն քննադատելով Մառին, որոշ շափով տուրք է տվել, այսպես կոչված, ստալինյան լեզվաբանական ուսմունքի դրույթներին:

Լեզվի դասակարգայնության և վերնաշենքային արտահայտության վերաբերյալ Սևակը վերանայելով իր նախկին տեսակետը, նշում է, որ «Լեզուն հանդիսանում է ոչ թե վերնաշենքային ու դասակարգային արտահայտության, այլ մարդկանց հաղորդակցման միջոց, մտքերի փոխանակման միջոց և մտածողության գործիք կամ մտքերի ձևավորման նյութական թաղանթ»⁷:

Հակադրվելով Ն. Մառի հարցապնդումներին, հեղինակը գտնում է, որ լեզուն միշտ և ամենուրեք եղել է համաժողովրդական և ծառայել է հասարակության բոլոր դասակարգերին որպես հասարակության միավորող օղակ, որպես կուլտուրայի ձև:

Այս տեսանկյունով քննելով հայոց լեզվի պատմական ընթացքը, հեղինակը գտնում է, որ հայերենը իր դարավոր գոյության ընթացքում թեև կրել է մեծ փոփոխություններ, ունեցել է անընդհատ շփումներ՝ մոտ և հեռու շատ լեզուների հետ, ենթարկվել է նվաճող ժողովուրդների բռնի ձուլման

⁷ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», էջ 5:

փորձերին, ազգվել ու փոխառություններ կատարել բազմաթիվ լեզուներից, սակայն միշտ պահպանել է իր ինքնուրույնությունը, իր քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի ինքնատիպությունը՝ հանդես բերելով վիթխարի դիմադրողականություն:

Խոսելով գրական և ազգային լեզվի մասին, հեղինակը, պարզ, հստակ կերպով սահմանում է, որ գրական լեզուն կարող է լինել պետական, բայց չլինել ազգային, ինչպես և ազգային լեզուն կարող է լինել գրական, բայց ոչ պետական: Գրական լեզուն հասարակության գրագետ խավերի հաղորդակցման միջոցն է, որը ժամանակի ընթացքում տարածվելով դառնում է նաև խոսակցական լեզու: Սակայն նա չի կարող դառնալ ամբողջ հասարակության խոսակցական լեզու, եթե միաժամանակ ազգային լեզու չէ: Ազգային լեզուն ունենալով գրական լեզվի բոլոր ֆունկցիաները, ունի իր հատուկ հասարակական ֆունկցիան ևս: Այս առումով էլ հեղինակը գտնում է, որ հայոց ազգային լեզու չի կարող կոչվել գրաբարը, որը՝ չնայած հայության գրական ընդհանուր լեզու լինելուն (5—18-րդ դարերի ընթացքում), դեռևս ազգորեն չկազմավորված հայության գրական լեզուն էր: Ազգային լեզուն զգալի շափով գրականորեն կերտված լեզու է, որը մշակվում, հղկվում և կատարելագործվում է ժամանակի ընթացքում գրողների, գիտնականների ձեռքով, համապատասխան մարմինների հսկողությամբ, մամուլի և գրականության միջոցով: Ազգային լեզուն մշակվելով և զարգանալով դառնում է ազգության նաև խոսակցական լեզուն: Այնուհետև Սևակը

եզրակացնում է, որ հայոց ազգային լեզուն միայն սովետական կարգերում դարձավ ամենալայն զանգվածների լեզու:

Ժամանակակից հայոց լեզվի կազմավորման անցած ուղին Սեակը թեև սերտորեն շաղկապում է մի կողմից բարբառների և մյուս կողմից գրաբարի ներգործման հետ, սակայն գտնում է, որ արդի հայերենը ներկայանում է իբրև միանգամայն նոր սրակի լեզու, որը «ոչ գրաբար է, ոչ բարբառ, որի մեջ, սակայն կոմպրոմիսի կարգով ի մի են ձուլված և գրաբար և բարբառային կողմերը»: Հեղինակը գտնում է, որ ժամանակակից հայերենի բառապաշարը և բառակազմությունը հիմնականում գրաբարյան են (իհարկե, նոր փոխառությունները նկատի չառած), ձևաբանությունը՝ հիմնականում ժողովրդական, բարբառային է: Եթե գրաբարը գերազանցապես թեքական տիպի լեզու է՝ իր կառուցվածքով, ապա ժամանակակից հայոց լեզուն գերազանցապես կցական տիպի լեզու է: Շարահյուսությամբ և շարադասությամբ ևս արդի հայերենը հիմնականում ժողովրդական է և հակադրվում է գրաբարին:

Շատ հարուստ է գրքի «Բառագիտություն» բաժինը: Այստեղ հեղինակը հանգամանորեն քննել է հայերենի բառապաշարը (բառային կազմը, բառապաշարի շերտերը, գրաբարյան, ժողովրդա-բարբառային, նորագույն փոխառությունները, նորաբանությունները և հնաբանությունները), բառապաշարի տեղաշարժերը, բառակազմության տեխնիկայի զարգացման փուլերը, բառակազմության տեսակները և նո-

բագույն հասպալումները: Հայոց լեզվի ընդհանուր բառամբ-
թերքը հեղինակը բաժանում է հետևյալ շերտերի.

ա) Ընդհանուր հայերեն բառեր. սրա տակ հեղինակը նը-
կատի ունի բնիկ և փոխառյալ այն բոլոր բառերը, որոնք ան-
փոփոխ հնչյունակազմով կամ ճանաչելի հնչյունափոխու-
թյամբ ընդհանուր են գրաբարի, միջին հայերենի, բարբառ-
ների և արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների հա-
մար (հայր, մայր, մեծ, լավ, տուն, փար, խոսել, սիրել, կար-
դալ, խաղալ և այլն):

բ) Գրաբարյան բառեր, այս շերտի մեջ մտնում են բնիկ և
փոխառյալ այն բոլոր բառերը, որոնք գործածվել են միայն
գրաբար մատենագրության մեջ և չկան միջին հայերենում, բար-
բառներում ու գրական լեզուներում (բաղայֆ—պատրվակ,
գրեմ—սայթաքել, գմեմ—քնեցնել, երախան—սեղան, խումբ,
եկամույծ—ներսբերովի, եկակոչ—ատյան կանչված, բահու-
անդ—ասպարանջան և այլն):

գ) Միջին հայերեն բառեր. սրանք միջին հայերենում
գործածված բնիկ և փոխառյալ բառեր են (մարաջախտ—մար-
շալ, պայլ—իշխան, ակներա—հանրահաշիվ և այլն):

դ) Բարբառային բառեր. սրանք բարբառներում գործած-
վող, սակայն գրաբարին, միջին հայերենին ու գրական լե-
զուներին քիչ տարբեր հնչյունական ձևով անծանոթ բնիկ և
փոխառյալ բառեր են (րոյ—հասակ, եմնա—հետո, խասիաք—
բնավորություն և այլն):

ե) Նոր Հայերեն բառեր. այս շերտի մեջ են մտնում արև-
վելահայ և արևմտահայ գրական լեզուներում գործածվող բը-

նիկ և փոխառյալ բառերը, որոնք չկան գրաբարում, միջին հայերենում ու բարբառներում (հեծանիվ, հեռախոս, սոցիալիզմ, համալսարան, և այլն:

Գ. Սևակը բառապաշարի այս բաժանմանը զուգընթաց բացահայտում է յուրաքանչյուր շերտի առանձնահատուկ դիրքը մյուսների և ընդհանրապես հայոց լեզվի նկատմամբ, ինչպես նաև նրանց ներքին փոխհարաբերությունները: Այսպես՝ առաջին շերտը կենդանի և հարաշարժ է եղել նախնական շրջանից սկսած և նվազած վիճակով կենդանի է ցայսօր: Երկրորդ շերտը գրաբարի կենդանությունից դարերում բնականաբար աճել և զարգացել է, իսկ գրաբարի մահացումից հետո զրկվել է զարգանալու հնարավորությունից և մեզ է հասել սահմանափակ վիճակում: Երրորդ շերտը իր պատմական զարգացման ընթացքով և արդի վիճակով նման է երկրորդին: Չորրորդ շերտը՝ բարբառային բառերը, իբրև կենդանի և ակտիվ բառապաշար ենթակա է անընդհատ փոփոխության և վերջապես հինգերորդ շերտը՝ (նոր հայերեն բառերը) ենթակա է աճման և զարգացման, քանի կենդանի է և զարգանում է գրական աշխարհաբարը:

Ձևաբանության բաժնում Գ. Սևակը քննում է հիմնական և երկրորդական ձևույթները, խոսքի մասերի որոշման հիմունքները, նյութական և ձևական խոսքի մասերը, հայերենի հոլովման և խոնարհման ողջ համակարգը:

Հայ լեզվաբանների մեջ Գ. Սևակն առաջինն էր, որ հանդամանորեն մշակեց հնչյունի և հնչույթի, ձևի և ձևույթի կատեգորիան: Ծիշտ է, թեև սրանց մասին խոսել է Գ. Ղափանց-

յանը իր «Ընդհանուր լեզվաբանություն» մեջ, բայց նա պարզ ու հստակ շկարողացավ ներկայացնել այդ կատեգորիաները՝ արդի հայերենի լեզվական փաստերի հիմքի վրա: Պրոֆ. Սեվակը սահմանում է. «Լեզվական յուրաքանչյուր կոնկետիվունի հանրորեն գիտակցված և արժեքավորված սահմանափակ հնչյունական հասկացություններ, իսկ ամեն վայրկյան արտասանվող կոնկրետ հնչյուններն իրենց բաղմազանությունմբ գիտվում են իբրև արժեքավորված և գիտակցված այս կամ այն հնչյունի դրսևորում... Այստեղ ևս հանդես է գալիս կոնկրետի և աբստրակտի, ընդհանուրի և մասնավորի դիալեկտիկական կապը: Կոնկրետը, արտասանելին և լսելին՝ նյութական հնչյունն է, որն ինչպես արդեն գիտենք, լեզվի նյութական նվազագույն տարրն է: Աբստրակտը, ընդհանուրը, աննյութականը կամ մտայինը այն պատկերն է, լուսանրկարը, որ հանում է մարդու ուղեղը կոնկրետ հնչյուններից, ելնելով նրանց ընդհանրություններից և տարբերություններից: Հանրորեն գիտակցված և արժեքավորված յուրաքանչյուր հնչյուն կամ հնչյունական հասկացությունը հնչույթ (ֆունեմա) է»⁸: Չևույթի մասին Սևակը նշել է. «Չև ասելով հասկանում ենք լեզվական յուրաքանչյուր իրողության կամ արտահայտության արտահայտչական կողմը, դրսևորման միջոցը, այն եղանակները, որոնց միջոցով դրսևորվում է լեզվական յուրաքանչյուր արտահայտություն, լինի նա խոսք, նախադա-

8 Գ. Սևակ, Հայոց լեզվի տեսություն էջ 91—92, «ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», էջ 80—81:

սովորուն, բառ, ածանց և այլն... Ձևույթ (մորֆեմա) ասելով հասկանում ենք ոչ թե սոսկ ձև վերցված, կտրված իր բովանդակությունից, այլ լեզվի նվազագույն այնպիսի միավոր, որը հանդիսանում է թե ձև, թե բովանդակություն, կամ այլ ձևով ասած՝ ունի և ձև, և բովանդակություն: ...Ձևույթները լեզվի ատաղձն են, շինանյութը՝ լեզվական նվազագույն այնպիսի միավորներ, որոնք անպայման ունեն որոշ իմաստ»⁹:

Ժամանակակից հայոց լեզվի քերականության կարգերը Գ. Սևակը քննում է լեզվական հարուստ փաստերի հիման վերա, կուռ և հաստատուն տրամաբանությամբ, կատարում է գիտական խոր ընդհանրացումներ և անում է արժեքավոր եզրակացություններ: Մ. Աբեղյանից հետո Գուրգեն Սևակը, ինչպես ճիշտ նշել է պրոֆ. է. Աղայանը իր «Հայ լեզվաբանության պատմության» մեջ, ժամանակակից հայոց լեզվի մեծ հետազոտողն է:

Ակադեմիկոս Գ. Սևակը մեծ վաստակ ունի ոչ միայն ժամանակակից հայոց լեզվի գիտական ուսումնասիրության մեջ, այլև տեսական-լեզվաբանական մտքի զարգացման գործում: Նա ինչպես ասվեց, ակտիվ դեր է խաղացել հայոց լեզվի նորմավորման ասպարեզում: Նրա ջանքերով ստեղծվեց պետական տերմինաբանական կոմիտեն, որի հիմնադիրն ու գիտնական քարտուղարն էր նա 1932-ից մինչև 1940 թ.: Նրա նախագծերով են հաստատվել հայոց լեզվի ուղղագրու-

⁹ Անդ, էջ 117—118:

թյան, ուղղախոսության, կեստադրության, տերմինաշինության պետական նորմաները, որոնք արժեքավոր ներդրում են լեզվաշինության մարզերում:

Գ. Սեակի հայացքները հայոց լեզվի զարգացման և լեզվաշինության բնագավառում կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական կետերով.

1. 19-րդ դարի կեսերին հայ ժողովուրդը թևակոխեց իր դարավոր գոյության նոր փուլը՝ ազգային կյանքի փուլը և տնտեսական-քաղաքական ու լեզվական երկատվածության հետևանքով իր ազգային լեզուն զարգացրեց երկու նյութով (արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ), որոնք հետըզհետ հեռացան իրարից և ունեցան տարբեր ճակատագիր հայ ժողովրդի կյանքում:

